«Ամերիաբանկ» ՓԲԸ
+(37410) 561111, +(37412) 561111 office@ameriabank.am

# Ինտերնետ էքվայրինգ ծառայության պայմաններ և սակագներ

*Ընդունվել է Բանկի Տնօրինության 05.09.2018թ. թիվ 03/24/18 որոշմամբ, սույն խմբագրությունը՝ 21.04.2026թ. թիվ 01/60/26 որոշմամբ և ուժի մեջ է 27.04.2026 թ-ից:*

## Սահմանումներ

**Պայմաններ**՝ սույն փաստաթուղթը՝ ինտերնետ էքվայրինգ ծառայության պայմանները և սակագները,
**Բանկ՝** «Ամերիաբանկ» ՓԲԸ,
**Առևտրի կետ՝** Բանկի՝ ինտերնետ էքվայրինգ ծառայության հայտ-պայմանագիր/պայմանագիր կնքած իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդի կողմից հիմնադրված, ապրանքների վաճառքով և (կամ) ծառայությունների մատուցմամբ զբաղվող ՀՀ ռեզիդենտ առևտրի/սպասարկման կետ: Ընդ որում, Պայմանների իմաստով «Առևտրի կետ» եզրույթը ներառում է նաև Բանկի՝ ինտերնետ էքվայրինգ ծառայության հաճախորդ հանդիսացող իրավաբանական անձին/անհատ ձեռնարկատիրոջը,
**Կողմ(եր)**՝ Բանկը և Առևտրի կետը,
**վճարային քարտ** (այսուհետ՝ նաև քարտ)՝ անկանխիկ վճարում կատարելու վճարային գործիք:
**վճարային համակարգ(եր)**՝ քարտերը սպասարկող վճարային համակարգեր (VISA, MasterCard, ArCa և այլն (առկայության դեպքում)),
**Ինտերնետ էքվայրինգ ծառայություն (նաև՝ Ծառայություն)**՝ Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է Առևտրի կետի կողմից ինտերնետային կայքի կամ բջջային հավելվածի միջոցով ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց քարտով վճարումների ընդունումը և դրանց հաշվարկների կատարումը,
**թողարկող բանկ՝** վճարային քարտը թողարկող բանկ,
**հավաստագրում (ավտորիզացիա)՝** վճարային քարտով գործարքի կատարման համար թողարկող բանկի թույլտվությունը ստանալու գործընթաց,
**քարտապան՝** անձ, որը թողարկող բանկի հետ կնքել է վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր,
**գործարք՝** Առևտրի կետի ինտերնետային կայքի կամ բջջային հավելվածի միջոցով քարտով կատարված անկանխիկ գործարք,
**Ծանուցում**՝ Ծառայության հետ կապված՝ Բանկի կողմից Առևտրի կետին տրամադրվող ծանուցումները, նյութերը/փաստաթղթերը, Պայմանների փոփոխման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն:
**Apple Pay** ՝ Ծառայության առանձին հնարավորություն/ֆունկցիոնալ՝ Առևտրի կետի ինտերնետային կայքի կամ բջջային հավելվածի միջոցով կատարվող գործարքների դիմաց Apple Pay հարթակի միջոցով քարտով վճարման եղանակ:
**Apple Pay-ի պայմաններ՝** Apple Pay-ի պայմաններ և կանոններ (https://developer.apple.com/apple-pay/terms/apple-pay-web/):

## 1. Ծառայության սակագներ

1.1 Առևտրի կետը յուրաքանչյուր գործարքից Պայմաններով սահմանված կարգով Բանկին վճարում է սույն գլխով սահմանված միջնորդավճարները, եթե այլ բան չի նախատեսվել Բանկի և Առևտրի կետի միջև ձեռքբերված համաձայնությամբ:

1.2 Հիմք ընդունելով Բանկի և Առտրի կետի միջև երկարատև համագործակցությունը, Առտրի կետի կողմից իրականացվող գործարքների ծավալները և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ հիմնավոր պատճառներ՝ Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և պայմաններ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:

1.3 Սույն գլխով նախատեսված այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

1.4 Ծառայության տրամադրման համար սահմանվում են հետևյալ սակագները.

| Քարտատեսակ | Գործարքներից գանձվող միջնորդավճար (%) |
|---|---|

| | |
|---|---|
| ArCa քարտեր | 1.5 |
| ԱրՔա անդամ բանկերի թողարկած VISA, MasterCard քարտեր | 2.7 |
| Ոչ ԱրՔա անդամ բանկերի թողարկած VISA և MasterCard քարտեր | 2.7 |

## 2. Պայմանագրի կնքում, փոփոխություն, Ծառայության ակտիվացում

2.1 Պայմանները սահմանում են Ինտերնետ էքվայրինգ ծառայությունից օգտվող Առևտրի կետ(եր)ի և Բանկի՝ որպես Ինտերնետ էքվայրինգ ծառայություն մատուցողի փոխհարաբերությունների պայմանները:

2.2 Բանկը Առևտրի կետին մատուցում է Ինտերնետ էքվայրինգ ծառայություն՝ Բանկի սահմանած ձևանմուշով Առևտրի կետի Բանկ ներկայացրած հայտ-պայմանագրի (այսուհետ՝ Հայտ-պայմանագիր) և դրանում նշված պայմանների հիման վրա, որով Առևտրի կետը հաստատում է Պայմանների անվերապահ ընդունումը (ակցեպտավորումը):

2.3 Հայտ-պայմանագրում Առևտրի կետի կողմից համապատասխան նշում կատարված լինելու դեպքում Բանկի կողմից Առևտրի կետի համար Apple Pay-ով վճարման ֆունկցիոնալն ակտիվացվում է Առևտրի կետի և (կամ) վերջինիս ինտերնետային կայքի/բջջային հավելվածի՝ Apple Pay-ի պայմաններին համապատասխանության դեպքում: Ընդ որում, Apple Pay-ով վճարման ֆունկցիոնալը Apple Pay-ի պայմանների իմաստով գործարկվում է Պրոցեսինգային կենտրոնի համապատասխան տեխնիկածրագրային լուծմամբ, իսկ Բանկն ապահովում է Առևտրի կետին Ֆունկցիոնալի տրամադրման համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

2.4 Ինտերնետ էքվայրինգ ծառայության տրամադրման շրջանակներում Կողմերի միջև Հայտ-պայմանագիրը՝ դրանում ներառված պայմաններով կարող է կնքվել Բանկի կողմից կիրառվող հեռավար սպասարկման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով: Ընդ որում, Հայտ-պայմանագիրը Համակարգով կնքելու ցանկացած դեպքում Բանկը կարող է կիրառել Առևտրի կետի նույնականացման հավելյալ միջոցներ: Սույն կետով սահմանված պահանջների պահպանմամբ Համակարգի միջոցով Առևտրի կետի և Բանկի միջև կնքված Հայտ-պայմանագիրն ունի նույն իրավական ուժը, ինչ ձեռագրով ստորագրվածը:

2.5 Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները ծագում են/ուժի մեջ են.

2.5.1 Ծառայության մատուցման համար անհրաժեշտ՝ Առևտրի կետի համաձայնությունների և հաստատումների մասով՝ Պայմանների ակցեպտավորման և(կամ) համաձայնությունները ու հաստատումները առանձին Առևտրի կետի կողմից Բանկին տրամադրելու պահից: Սույն կետում նշված համաձայնությունները համարվում են Ծառայության դիմելու նախապայման և օգտագործվում են Բանկի կողմից Ծառայությունը տրամադրելու մասին որոշում կայացնելու և/կամ Ծառայությունը տրամադրելու համար:

2.5.2 Բանկի կողմից Ծառայության տրամադրման մասով՝ Առևտրի կետի ակցեպտը (հայտը)՝ Հայտ-պայմանագիրը, Բանկի կողմից ստանալու և ընդունելու պահից, որը և այդ պահից, Պայմանների հետ միասին, համարվում է Կողմերի միջև կնքված պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Համակարգի միջոցով Պայմանագիրը համարվում է կնքված Հայտ-պայմանագիրը Բանկ ներկայացվելու և Բանկի կողմից այն ստանալու և ընդունելու վերաբերյալ Բանկի կողմից Առևտրի կետին ծանուցելու և(կամ) Ծառայության տրամադրման հաստատման պահից:

2.6 Հայտ-պայմանագրում ուղղակիորեն նշված՝ Ծառայության պայմանների հետագա փոփոխությունների մասին Առևտրի կետի հանձնարարականը Բանկ կարող է ներկայացվել Բանկի սահմանած ձևանմուշով: Առևտրի կետի հանձնարարականը Բանկը դիտարկում և կատարում կամ մերժում է ՀՀ օրենսդրությամբ, վճարային համակարգերի կանոններով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում: Այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո փոփոխվող պայմանի հետ կապված մինչ այդ տրված հանձնարարականները համարվում են ուժը կորցրած: Պայմանների

իմաստով՝ Հայտ-պայմանագրով ներկայացված հանձնարարականներն ու ընտրված պայմանները կիրառելի են դրանց հետագա բոլոր փոփոխություններով:

2.7 Բանկն իրավունք ունի, առանց Առնտրի կետի լրացուցիչ համաձայնության, միակողմանիորեն փոփոխել Պայմանները՝ Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով և/կամ Բանկի կողմից սահմանված այլ եղանակով ծանուցելով Հաճախորդին, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկը փոփոխությունների ու լրացումների մասին Պայմաններով սահմանված կարգով Առնտրի կետին ուղարկում է ծանուցում:

2.8 Բանկը Պայմանագրի կնքման օրվանից 10 (տասը) բանկային օրվա ընթացքում իրականացնում է Ծառայության ակտիվացման համար անհրաժեշտ գրանցումները և տվյալների տրամադրումը Առնտրի կետին, եթե Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն Բանկի կողմից իրականացվող ուսումնասիրության արդյունքում առկա չեն ծառայության տրամադրումը արգելող հիմքեր:

## 3. Ծառայությունից օգտվելու կարգը

3.1 Բանկն ապահովում է Առնտրի կետի ինտերնետային կայքում գործարքների շուրջօրյա հավաստագրումը, ինչպես նաև գործարքների գումարները անկանխիկ փոխանցում է Առնտրի կետին Պրոցեսինգային կենտրոնից գործարքների հաստատումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ գանձելով Պայմաններով սահմանված միջնորդավճարը: Բանկը փոխանցում է այն գործարքների գումարները, որոնք կատարվել են Հայտ-պայմանագրին և Պայմանների պահանջներին համապատասխան:

3.2 Բանկը կարող է Առնտրի կետի՝ Բանկի նկատմամբ առաջացած դրամական պարտավորություններն անակցեպտ կարգով գանձել Առնտրի կետի Բանկում սպասարկվող դրամային և անհրաժեշտության դեպքում նաև արտարժութային հաշիվներից:

3.3 Բանկը կարող է Առնտրի կետի հետ Պայմանների ներքո ծագած իրավահարաբերության ընթացքում Առնտրի կետից պահանջել մուտքագրել պահուստային դրամական միջոցներ՝ կախված Առնտրի կետի գործարար բնութագրից և գործունեության տեսակից: Նման դեպքերում Բանկը Առնտրի կետի հաշվին պահուստային դրամական միջոցների վրա սահմանափակում սահմանելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին Պայմանների համաձայն ծանուցում է Առնտրի կետին: Բանկն իրավունք ունի նշված պահուստային միջոցների՝ Առնտրի կետի կողմից օգտագործումը սահմանափակել նաև Պայմանագրի դադարեցումից հետո մինչև 6 (վեց) ամսվա ընթացքում, ինչպես նաև այդ միջոցներից գանձել Պայմանագրի գործողության ընթացքում և Պայմանագրի դադարեցումից հետո ի հայտ եկած՝ Ծառայության հետ կապված ծախսերն ու Պայմանների խախտման հետևանքով Բանկին պատճառված վնասների գումարները: Սույն կետում նշված պահուստային գումարների չափերը ներկայացված են Պայմանների Հավելված 1-ում:

3.4 Բանկը կարող է Առնտրի կետի ինտերնետային կայքում իրականացվող գործարքների համար սահմանել մեկ գործարքի առավելագույն գումարային սահմանաչափ և որոշակի միավոր ժամանակահատվածի համար ընդհանուր հանրագումարային սահմանաչափ՝ այդ մասին տեղեկացնելով Առնտրի կետին: Սույն կետում նշված սահմանաչափերը ներկայացված են Պայմանների Հավելված 1-ում:

3.5 Ծառայության ներքո Առնտրի կետին տրվում է հնարավորություն վճարումներ ընդունել ՀՀ դրամով և տվյալ պահին Ծառայության ներքո Բանկի կողմից առաջարկվող արտարժույթի տեսակներով: Առնտրի կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Գործարքները արտարժույթով իրականացնելու հնարավորության դեպքում ինտերնետային կայքում պետք է ունենալ տեխնիկական լուծում, որով Հայաստանի տարածքում իրականացվող գործարքները կկատարվեն միայն ՀՀ դրամով:

3.6 Բանկը Առնտրի կետին տրամադրում է հնարավորություն Ծառայությունը գործարկել հայերենով, իսկ տեխնիկական հնարավորության առկայության դեպքում՝ նաև այլ լեզուներով: Առնտրային կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել լեզվի վերաբերյալ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

3.7 Եթե Առևտրի կետն իրականացնում է ապրանքների վաճառք՝ առաքման միջոցով կամ ապրանքը Առևտրի կետի տարածքից ստանալու (in-store pick up) տարբերակով, գործարքի հիմնավորող փաստաթուղթը պետք է կազմված լինի առնվազն անգլերենով և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

3.7.1 Ապրանքի նկարագրություն,

3.7.2 Ապրանքի առաքման / ստացման հասցե,

3.7.3 Ապրանքի առաքման/ստացման ամսաթիվ, ժամ,

3.7.4 Ստացողի անուն, ազգանուն,

3.7.5 Ստացողի ստորագրություն,

3.7.6 Բանկային քարտի համարի վերջին 4 նիշը, որով իրականացվել է ապրանքի դիմաց վճարումը:

Եթե վճարողը և ստացողը տարբեր անձինք են, խնդրահարույց գործարքների, այդ թվում՝ հետագայում երրորդ անձի կողմից Բանկին գումարի վերադարձման պահանջ ներկայացվելու դեպքում, բացի սույն կետում նշված տեղեկատվությունից, անհրաժեշտ է նաև վճարողի ծանուցումը կամ վերջինիս հետ հաղորդակցության հիմքերը, որով նա Առևտրի կետին հայտնում է, թե ով է ստանալու ապրանքը և/կամ տրամադրում է այդ անձի տվյալները:

3.8 Եթե Առևտրի կետը կիրառում է արտոնյալ կամ անվճար փորձարկման ժամանակահատված, ապա այդ ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 7 (յոթ) օր առաջ Առևտրի կետը պարտավոր է էլեկտրոնային փոստով ծանուցել քարտապանին նախատեսվող գանձման և այն չեղարկելու համար անհրաժեշտ քայլերի մասին:

3.9 Առևտրի կետը պարտավոր է պահպանել քարտերով կատարված գործարքների մասին մանրամասն տեղեկատվությունը (էլեկտրոնային անդորրագրերը և այլ հիմնավորող փաստաթղթերը) 3 (երեք) տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման օրվանից՝ պահպանելով դրանց ամբողջականությունը, եթե ավելի երկար ժամկետ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ՝ կախված Առևտրի կետի գործունեության ոլորտից, և Բանկի առաջին իսկ պահանջով 3 (երեք) բանկային օրվա ընթացքում տրամադրել դրանք Բանկին:

3.10 Առևտրի կետն իրավունք չունի ինտերնետային կայքում քարտերով վճարվող գործարքների համար սահմանել հավելավճարներ և/կամ այլ պայմաններ, քան այլ վճարման եղանակների համար:

3.11 Առևտրի կետն իրավասություն չունի տրամադրել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտերով կատարված գործարքը անվավեր ճանաչվելու/չեղարկվելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտին անկանխիկ եղանակով:

3.12 Առևտրի կետն իրավունք չունի կատարել գանձում քարտապանից, եթե տեղի չի ունեցել ստորև նշված պայմաններից առնվազն մեկը.

3.12.1 Գործարքը հաստատվել է,

3.12.2 Ապրանքը կամ ծառայությունը առաքվել կամ տրամադրվել է (սա չի վերաբերում մասնակի կամ լրիվ կանխավճարով գործարքներին),

3.12.3 Ստացվել է քարտապանի համաձայնությունը որոշակի պարբերականությամբ գանձումների համար:

3.13 Առևտրի կետն իրավունք չունի քարտապանից պահանջել վերջինիս բանկային հաշվեհամարը և օգտագործել այդ հաշվեհամարը այլ նպատակներով, քան Առևտրի կետի կողմից մատուցվող ծառայությունների կամ վաճառվող ապրանքների դիմաց վճարումներ ընդունելու համար, ինչպես նաև վճարային համակարգերի կողմից իրականացվող՝ բանկային հաշվեհամարների կարգավիճակի ստուգման ծառայությունից օգտվելու համար:

3.14 Առևտրի կետն իրավունք չունի Ծառայության ներքո ընդունել քարտով վճարումներ՝ քարտապանի՝ նախկինում ձևավորված պարտքի դիմաց կամ այդ պարտքի վերաֆինանսավորման նպատակով:

3.15 Բանկը կարող է անվավեր համարել այն գործարքները, որոնք չեն ստացել հավաստագրում Բանկի, ինչպես նաև Պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված պահանջների և կանոնների համաձայն և/կամ չեն ներկայացվել Բանկ գործարքի կատարումից հետո 5 (հինգ)-օրյա ժամկետում:

3.16 Առևտրի կետը պարտավոր է նախապես գրավոր տեղեկացնել Բանկին գործունեության ոլորտի կամ ինտերնետային կայքի հասցեի փոփոխության մասին ոչ ուշ, քան փոփոխությունը ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ:

## 4. Ինտերնետային կայքի և բջջային հավելվածի համար սահմանված պահանջները

4.1 Պայմաններում Առևտրի կետի ինտերնետային կայքի համար սահմանված պահանջները տարածվում են նաև Առևտրի կետի բջջային հավելվածի վրա, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանների համապատասխան դրույթում:

4.2 Առևտրի կետը պարտավոր է Բանկի հետ համաձայնեցված եղանակով կառուցել և շահագործել իր ինտերնետային կայքի՝ քարտերով վճարումներ ընդունելու համար օգտագործվող մասը:

4.3 Առևտրի կետը իրավասու չէ ձևափոխել և/կամ տրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը և այլ նյութերը:

4.4 Առևտրի կետը պարտավոր է օգտվել Ծառայությունից միայն Հայտ-պայմանագրում նշված ինտերնետային կայքում վաճառքների համար: Առևտրի կետն իրավունք չունի վճարման համար ներկայացնել այնպիսի գործարքներ, որոնք մեկ այլ առևտրի կետում կատարված վաճառքների արդյունք են:

4.5 Առևտրի կետը կրում է իր ինտերնետային կայքի կառուցման և շահագործման հետ կապված բոլոր ծախսերը:

4.6 Առևտրի կետը քարտերով վճարումները պարտավորվում է ընդունել միայն Բանկի և Բանկին սպասարկող պրոցեսինգային կենտրոնի (այսուհետ՝ Պրոցեսինգային կենտրոն) կողմից ներկայացված հատուկ պահանջներին համապատասխան եղանակով:

4.7 Առևտրի կետը պետք է ունենա գործարքների իրականացման ինտերնետային կայքի և Բանկին ներկայացված՝ Առևտրի կետի կողմից գործածվող ինտերնետային կայքերի դոմենների նկատմամբ իրավասությունները հավաստող փաստաթուղթ, որը պետք է ներկայացվի Բանկ՝ վերջինիս առաջին իսկ պահանջի դեպքում:

4.8 Առևտրի կետը պետք է կիրառի ինտերնետային կայքի տեղեկատվության պաշտպանության գաղտնագրման արդիական ստանդարտներ) և ներկայացնի այդ փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթ (սերտիֆիկատ):

4.9 Ինտերնետային կայքը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես.

4.9.1 պետք է առկա լինի ՀՀ օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվությունը, ներառյալ՝ նման օրենսդրական պահանջ սահմանված լինելու դեպքում՝ ցուցադրված լինի տվյալ գործունեությունը ծավալելու համար անհրաժեշտ լիցենզիան և այլ նյութերը,

4.9.2 առկա տեղեկատվությունը, ներառյալ գովազդը, պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

4.9.3 պետք է ապահովված լինեն տվյալ կազմակերպության գործունեության որորտի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային լուծումները, ներառյալ գնորդի տարիքային սահմանափակումների համար և այլն:

4.10 Ինտերնետային կայքում պետք է ներկայացված լինի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը.

4.10.1 «Մեր մասին» բաժինը, որը կներառի Առևտրի կետի ընդհանուր նկարագիրը, գործունեության ոլորտի վերաբերյալ և այլ տեղեկություններ,

4.10.2 Առևտրի կետի կոնտակտային տվյալները (հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն և այլն),

4.10.3 ինտերնետային կայքում առաջարկվող ապրանքների կամ ծառայությունների լիարժեք նկարագրություն՝ գովազդվող ապրանքի/ծառայության իրական տվյալներին/չափանիշներին համապատասխան,

4.10.4 իրավական սահմանափակումները (առկայության դեպքում),

4.10.5 իրական գները և արժույթը (ընդ որում՝ գնանշումը ՀՀ դրամով պարտադիր է),

4.10.6 առաքման պայմանները, այդ թվում Հայաստանից դուրս առաքման սահմանափակումները (առկայության դեպքում)

4.10.7 ապրանքների վերադարձի և գումարի փոխհատուցման պայմանները,

4.10.8 հաճախորդի տվյալների, իսկ կիրառելիության դեպքում՝ նաև ինտերնետային կայքի գաղտնիության քաղաքականությունը, ինտերնետային կայքի քուքիների քաղաքականությունը,

4.10.9 ինտերնետային կայքի անվտանգության հնարավորությունները և քարտերի տվյալների օգտագործման կանոնները,

4.10.10 հատուկ առաջարկներից օգտվելու պայմանները, եթե դրանք ունեն սահմանափակումներ,

4.10.11 տեղեկատվություն այն մասին, թե ինտերնետային կայքում որ վճարային համակարգերի քարտերն են ընդունվում վճարման համար, մասնավորապես առնվազն պետք է առկա լինեն նշված համակարգերի գունավոր առնտրային նշանները,

4.10.12 Եթե ինտերնետային կայքում առկա է արտոնյալ կամ անվճար փորձարկման (free trial) ժամանակահատված կիրառելու հնարավորություն, ապա պետք է հստակ ներկայացված լինեն դրա կիրառման պայմանները, ժամկետները, ներառյալ, բայց չսահմանափակվելով.

4.10.12.1 հետագա պարբերական գանձումները սկսելու ամսաթիվը կամ այն ժամկետը, որի լրանալու օրը կատարվելու է գանձում,

4.10.12.2 հայտարարություն այն մասին, որ եթե նախքան անվճար/արտոնյալ ժամկետի ավարտը քարտապանի կողմից գործարքը չի չեղարկվում, ապա կատարվելու է քարտից գանձում,

4.10.12.3 գործարքների չեղարկման հիմնական կանոնները, ներառյալ հերթական պարբերական գանձումը չեղարկելու նպատակով քարտապանի կողմից կատարման ենթակա քայլերը,

4.10.12.4 ապրանքների վերադարձի և գումարի փոխհատուցման կարգը:

4.11 Ինտերնետային կայքում հղումները պետք է լինեն իրական և պարունակեն իրական տվյալներ, ինչպես նաև չուղղորդեն այլ կայքեր, որոնք խախտում են Պայմանները:

4.12 Բանկն ապահովում է Առնտրի կետին վերջինիս ինտերնետային կայքի՝ քարտերով վճարումներ ընդունելու համար օգտագործվող մասի կառուցման և հետագա շահագործման համար անհրաժեշտ տեղեկություններով:

## 5. Մոնիտորինգ, զեղծարարություն, բողոքարկված գործարքներ

5.1 Առնտրի կետում չպետք է իրականացվեն ՀՀ օրենսդրության և վճարային համակարգերի կանոնների համաձայն արգելված կամ անօրինական գործարքներ: Նման գործարքների բացահայտման դեպքում Առնտրի կետի նկատմամբ կարող է կիրառվել տուգանք՝ համապատասխան վճարային համակարգի կողմից սահմանված կարգով և չափով, ընդ որում կարող է դիտարկվել տուգանք չկիրառելը կամ մասամբ կիրառելը, եթե Առնտրի կետը նախքան վճարային համակարգից խախտման վերաբերյալ ծանուցում ստանալը կարգավորել է խնդիրը:

5.2 Առնտրի կետի հետ Պայմանների ներքո ծագած իրավահարաբերությունների ընթացքում Բանկն իրավունք ունի կատարել քարտային գործարքների և ինտերնետային կայքի նկատմամբ սահմանված պահանջների ապահովման մոնիտորինգ՝ վճարային համակարգերի պահանջների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

5.3 Բանկը կարող է սահմանափակել Առնտրի կետի բանկային հաշվի միջոցների տնօրինումը Առնտրի կետի կողմից՝ բողոքարկվող գործարքի գումարի չափով՝ տվյալ տեսակի բողոքարկման պարզաբանման համար վճարային համակարգերի կանոններով սահմանված ժամանակահատվածով, բայց ոչ ավել քան 6 (վեց) ամսով, եթե Առնտրի կետում քարտով վճարում կատարած անձը բողոքարկում է տվյալ Առնտրի կետում գործարք կատարելու փաստը:

5.4 Բանկը կարող է Առնտրի կետից (կամ նրա բանկային հաշիվներից) գանձել գործարքների գումարները՝ Պայմանների խախտումով կամ ապօրինաբար կատարված լինելու, ինչպես նաև երրորդ անձի կողմից Բանկին գումարի վերադարձման պահանջ ներկայացվելու և այդ պահանջի հիմնավոր լինելը Բանկի կողմից հաստատվելու դեպքերում՝ այդ մասին տեղեկացնելով Առնտրի կետին:

5.5 Առևտրի կետը պարտավորվում է Բանկին հատուցել այն ծախսերը, որոնք Բանկը կրում է բողոքարկված գործարքի հետ կապված՝ Առևտրի կետի պահանջով վճարային համակարգերի կանոններին համապատասխան բողոքարկման գործընթացի արբիտրաժային փուլին մասնակցելու դեպքում:

5.6 Առևտրի կետն իրավունք չունի ընդունել քարտով վճարում, եթե տիրապետում է կամ կարող է տիրապետել տեղեկատվության այն մասին, որ գործարքը զեղծարար/ոչ իրավաչափ է կամ կատարվում է առանց քարտապանի համաձայնության/թույլտվության:

5.7 Առևտրի կետն իրավունք չունի ընդունել վճարում այնպիսի գործարքի համար, որը նախկինում բողոքարկվել է քարտապանի կողմից:

5.8 Առևտրի կետը պարտավորվում է քարտերով կասկածելի կամ ոչ իրավաչափ գործարքների հայտնաբերման կամ նման կասկածի դեպքում անմիջապես հայտնել այդ մասին Բանկին:

## 6. Ծառայության կասեցում, Պայմանագրի դադարեցում

6.1 Բանկն իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել Ծառայության տրամադրումը՝ Պայմաններով սահմանված կարգով այդ մասին ծանուցելով Առևտրի կետին, վերջինիս կողմից Պայմանների խախտման, այդ թվում՝ Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարելու դեպքում, ինչպես նաև կիրառել Ծառայության այլ սահմանափակումներ՝ վճարային համակարգ(եր)ի կողմից Բանկին նման պահանջ ներկայացվելու դեպքում:

6.2 Առևտրի կետի ինտերնետային կայքի խափանման/թերի աշխատանքի և/կամ ինտերնետային կայքում զեղծարար գործարքների բացահայտման կամ կասկածի դեպքում Բանկն իրավասու է, նախապես էլեկտրոնային նամակով տեղեկացնելով Առևտրի կետին, ցանկացած պահի իր հայեցողությամբ՝ միակողմանի կասեցնել կամ դադարեցնել Ինտերնետ էքվայրինգ ծառայության մատուցումը, ինչպես նաև ժամանակավոր կասեցնել Առևտրի կետի հաշվի և դրանում առկա միջոցների տնօրինման հնարավորությունը, մինչև գործարքների պարզաբանումը: Նման գործարքներից առաջացող բոլոր վնասների պատասխանատվությունը կրում է Առևտրի կետը:

6.3 Առևտրի կետն իրավասու է դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով Ծառայության հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:

6.4 Բանկն իրավասու է միակողմանի դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին՝ 5 /հինգ/ աշխատանքային օր առաջ նախապես ծանուցելով Առևտրի կետին, հետևյալ դեպքերում.

6.4.1 Պայմանների խախտման դեպքում,

6.4.2 ՀՀ օրենսդրության և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,

6.4.3 Բանկի օրինական պահանջները Առևտրի կետի կողմից չկատարելու, այդ թվում՝ Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չկատարվելու, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրվելու դեպքում,

6.4.4 վճարային համակարգ(եր)ի կողմից՝ Առևտրի կետի հետ Պայմանագիրը դադարեցնելու մասին Բանկին պահանջ ներկայացվելու դեպքում,

6.4.5 Առևտրի կետի կողմից այնպիսի գործունեության իրականացման դեպքում, որը կարող է վտանգել կամ վնասել վճարային համակարգ(եր)ի բարի համբավը,

6.4.6 Անհատ ձեռնարկատեր Առևտրի կետի դեպքում՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի մահվան դեպքում մահվան մասին պատշաճ ծանուցում, այդ թվում նաև՝ բավարար փաստաթղթային ապացույցներ ստանալու դեպքում, ինչպես նաև նման փաստի մասին Բանկի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից տեղեկատվություն ստանալու դեպքում,

6.4.7 Պայմաններով սահմանված այլ դեպքերում:

Ընդ որում, Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Առևտրի կետի կրած վնասների համար, իսկ Առևտրի կետը պարտավոր է հատուցել Բանկին վերջինիս կողմից սույն կետում նշված դեպքերում կրած բոլոր վնասները, կորուստներն ու ծախսերը ամբողջ ծավալով:

6.5 Ծառայության դադարեցումը չի դադարեցնում Առևտրի կետի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

6.6 Կողմերը պարտավորվում են Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները կատարել նաև Ծառայության միջոցով կատարված այն գործարքների համար, որոնք կատարվել են նախքան Պայմանագրի դադարեցումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել Պայմանագրի դադարեցումից հետո:

6.7 Առևտրի կետը պարտավոր է Պայմանագրի դադարեցման պահից 1 (մեկ) տարվա ընթացքում նախքան Պայմանագրի դադարեցումը Պայմանների խախտման հետևանքով Բանկին, այդ թվում՝ Բանկի բարի համբավին կամ հեղինակությանը պատճառված վնասի կամ ֆինանսական կորստի ամբողջ գումարի չափով փոխհատուցել Բանկին, ինչպես նաև փոխհատուցել նշված խախտումը վերացնելու համար Բանկի կողմից կատարված այլ ծախսերը:

## 7. Տվյալների գաղտնիություն, տեղեկատվության փոխանցման թույլտվություն

7.1 Բանկն իրավունք ունի Պայմանների ներքո ծագած իրավահարաբերության ամբողջ ընթացքում Առևտրի կետից պահանջել հավելյալ տեղեկատվություն՝ ի լրումն Բանկ ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի:

7.2 Առևտրի կետը պարտավոր է Բանկին ներկայացնել ինտերնետային կայքի միջոցով վաճառվող ապրանքների և/կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը:

7.3 Բանկն իրավունք ունի, առանց Առևտրի կետին լրացուցիչ տեղեկացնելու, Առևտրի կետի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել վճարային համակարգերին:

7.4 Բանկը պահպանում է Պայմաններից բխող պարտավորությունների կատարման ընթացքում Բանկին հայտնի դարձած գործարքների գաղտնիությունը: Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել երրորդ անձանց ՀՀ օրենսդրությամբ և Պայմաններով սահմանված դեպքերում, այդ թվում՝ Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին, որոնք ներգրավված են Ծառայության տրամադրման գործընթացում և/կամ իրականացնում եմ պատվիրակված գործառնություններ:

7.5 Բանկի և քարտապանի այն բանկային գաղտնիքը, որը հասանելի է դարձել Առևտրի կետին Պայմանների համաձայն վճարային քարտով վճարումներ ընդունելիս, ենթակա չէ բացահայտման Առևտրի կետի կողմից:

7.6 Քարտապանի տվյալների և գործարքների տվյալների պաշտպանության նպատակով Առևտրի կետում գործարքները պետք է իրականացվեն վճարային քարտերի տվյալների անվտանգության PCI DSS ստանդարտին և վճարայյին համակարգերի՝ տվյալների պաշտպանության այլ պահանջներին համապատասխան:

7.7 Առևտրի կետը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բանկին ցանկացած երրորդ անձի, այդ թվում՝ Առևտրի կետին ծառայություն մատուցողի կողմից քարտապանի տվյալներին հասանելիության իրական հնարավորություն ունենալու և/կամ այն օգտագործելու մասին: Նման հնարավորության կիրառումը երրորդ անձի կողմից պետք է նախապես համաձայնեցված լինի Բանկի հետ և համապատասխան լինի ՀՀ օրենսդրության և վճարային համակարգերի կանոններին: Առևտրի կետը պարտավորվում է հավաստիանալ, որ Առևտրի կետին ծառայություններ մատուցող այն երրորդ անձը, որին հասանելի են դառնում քարտապանի տվյալները և գործարքների տվյալները, համապատասխանում է վճարային քարտերի տվյալների անվտանգության PCI DSS ստանդարտին և վճարայյին համակարգերի՝ տվյալների պաշտպանության այլ պահանջներին:

7.8 Առևտրի կետը պարտավոր է Հայտ-պայմանագրով ներկայացված՝ Առևտրի կետի վերաբերյալ ցանկացած տեղեկատվության փոփոխության մասին անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին:

7.9 Առևտրի կետը իր ինտերնետային կայքի խափանման, գործարքների կառավարման ծրագրային մուտքի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում անմիջապես տեղեկացնում է Բանկին այդ մասին և անմիջապես կասեցնում է քարտերի սպասարկման գործընթացը մինչև Բանկից լրացուցիչ հրահանգի ստացումը:

7.10 Առևտրի կետը պարտավոր է համագործակցել վճարային համակարգի պահանջով իրականացվող՝ քարտային տվյալների գաղտնիության խախտման կասկածելի դեպքերի հետաքննություն (forensic investigation) իրականացնող կազմակերպությունների հետ՝ հետաքննության ամբողջ ընթացքում:

## 8. Կողմերի միջև հաղորդակցման կարգը

8.1 Առևտրի կետը հանձնարարում է Բանկին Ծանուցումները Առևտրի կետին տրամադրել վերջինիս կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ Առևտրի կետի Ինտերնետ բանկ/մոբայլ բանկինգ համակարգի էջին ուղարկելու/հասանելի դարձնելու միջոցով[1]: Նշված էլեկտրոնային հաղորդակցման միջոցների բացակայության (հասցեներին Բանկի կողմից չտիրապետելու) դեպքում Բանկը կարող է հնարավորության դեպքում Ծանուցումն ուղարկել Առևտրի կետի տրամադրած հեռախոսահամարին SMS հաղորդագրության միջոցով: Ընդ որում, մեկ եղանակով Ծանուցումն ուղարկելու դեպքում Բանկը պարտավոր չէ Ծանուցում իրականացնել նաև այլ եղանակ(ներ)ով՝ անկախ այն հանգամանքից Առևտրի կետը Ծանուցումը ստացել է, թե՝ ոչ:

8.2 Ծանուցումը Բանկի կողմից ուղարկվելու դեպքում Առևտրի կետը համարվում է պատշաճ ծանուցված՝ անկախ այն հանգամանքից, թե վերջինս փաստացի երբ է ստանում այն: Ծանուցումը Բանկի կողմից առձեռն հանձնվելու պարագայում Առևտրի կետը համարվում է պատշաճ ծանուցված՝ հրաժարվելով Պայմաններով սահմանված որևէ եղանակով լրացուցիչ ծանուցվելուց:

8.3 Առևտրի կետը Բանկի հետ կապ հաստատելու համար կարող է օգտագործել Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված Բանկի կոնտակտային տվյալները:

## 9. Կողմերի պատասխանատվությունը

9.1 Առևտրի կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Առևտրի կետը կրում է սույն կետի պատշաճ կատարման ողջ պատասխանատվությունը և պարտավորվում է հատուցել դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով և/կամ սույն կետով/ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, ներառյալ՝ շրջանցմամբ կատարված գործարքների համար Բանկին պատճառված իրական վնասը, ներառյալ՝ Բանկի նկատմամբ կիրառված տույժերը:

9.2 Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների խախտման դեպքում Առևտրի կետը կրում է լրիվ պատասխանատվություն իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընդ որում, Առևտրի կետը պարտավորվում է փոխհատուցել նաև քարտապանին պատճառված վնասը՝ պայմանավորված իրեն հայտնի բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակմամբ և/կամ այլ պարտավորությունների խախտմամբ, որոնք հանգեցրել են քարտապանին բարոյական կամ նյութական վնասի պատճառմանը:

9.3 Բանկը Առևտրի կետի համար Ծառայության ակտիվացման շրջանակներում լռելյայն ակտիվացնում է գործարքի գումարի վերադարձի (refund) ֆունկցիոնալը և երկկողմանի 3D secure, եթե այլ բան նախատեսված չէ Առևտրի կետի համապատասխան հանձնարարականով:

9.4 Ստորև նշված դեպքերում Առևտրի կետը կրում է Ծառայության միջոցով կատարված բոլոր գործարքների հետ կապված ողջ պատասխանատվությունը և ռիսկերը, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ գործարքների չկատարման, ոչ պատշաճ կատարման, անվավեր ճանաչման, գործարքի գումարի վերադարձի, ՀՀ օրենսդրությանը հակասող կամ զեղծարար գործարքների կատարման հետ կապված բոլոր ռիսկերը և դրանցից բխող ցանկացած տեսակի, այդ թվում՝ ֆինանսական հետևանքները/պարտավորությունները՝ Բանկին զերծ պահելով այդ կապակցությամբ երրորդ անձանց կողմից ներկայացվող ցանկացած պահանջներից և/կամ գործարքների հետևանքով կրած իրական վնասի փոխհատուցումից.

9.4.1 Առևտրի կետը նախընտրել է գործարքի գումարի վերադարձի (refund) ֆունկցիոնալը ապաակտիվացնել՝ ներկայացնելով Բանկ համապատասխան հանձնարարական:

[1] Սույն կետում նշված՝ ծանուցման տրամադրման եղանակը կիրառելի է՝ անկախ Առևտրի կետի կողմից Բանկին տրամադրված «Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական» փաստաթղթում ընտրված հաղորդակցման նախընտրություններից:

9.4.2 Առևտրի կետի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է քարտի համարի ամրակցման ֆունկցիան, ներառյալ եթե տվյալ ինտերնետային կայքում քարտի համարի ամրակցումից հետո տվյալ քարտով հետագա գործարքների համար 3D secure հավաստագրում չի պահանջվում,

9.4.3 Առևտրի կետի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է նախահավաստագրման-հաստատման ֆունկցիան,

9.4.4 Առևտրի կետը 3D secure տարբերակներից նախընտրել է միակողմանի 3D secure՝ ներկայացնելով Բանկ համապատասխան հանձնարարական,

9.4.5 Առևտրի կետի կողմից սպասարկվում են այնպիսի վճարային համակարգերի քարտեր, որոնք չեն ապահովում 3D secure կամ որոնց համար Ծառայության Պրոցեսինգային կենտրոնը չի ապահովում 3D secure,

9.4.6 Առևտրի կետը խախտել է Apple Pay-ի պայմանները:

9.5 Առևտրի կետը Պայմանների իմաստով պատասխանատու է իր աշխատակիցների բոլոր գործողությունների համար, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Պայմանների խախտման:

9.6 Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում՝

9.6.1 Պայմանների խախտումով կատարված գործարքների համար,

9.6.2 Ապօրինաբար գործածվող քարտերով կամ քարտային տվյալներով կատարված գործարքների համար,

9.6.3 Ինտերնետային կայքի և/կամ կապի միջոցների խափանման/անսարքության պատճառով վճարումների սպասարկման անհնարինության համար:

## 10. Այլ պայմաններ

10.1 Պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Բանկի և Առևտրի կետի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ նշված իրավական ակտերում առկա չեն Կողմերի միջև ծագած իրավահարաբերությունները կարգավորող դրույթներ, ապա դրանք կարգավորվում են քարտային վճարային համակարգերի կանոններով:

10.2 Կողմերը ժամանակավորապես ազատվում են Պայմաններով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել ՀՀ օրենսդրության համաձայն անհաղթահարելի ուժի հետևանքով:

10.3 Պայմանների կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի համաձայնությամբ և/կամ ՀՀ օրենսդրության իմպերատիվ նորմերի պահանջներով:

***Հավելված 1: Պահուստային գումարների չափեր*** **և գործարքների սահմանաչափեր**

Սույն հավելվածում ներկայացվածից բացի Բանկի իրավասու մարմնի որոշմամբ և/կամ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում կարող են սահմանվել հավելյալ պայմաններ:

| **Ոլորտ** | **Ծառայության միջոցով կատարվող մեկ գործարքի առավելագույն գումարային չափ** | **Միջին ամսական շրջանառություն (փաստացի կամ հայտ-պայմանագրում նախատեսված լինելու դեպքում)** | **Պահուստային գումար** |
|---|---|---|---|
| 1. Ավիատոմսերի պլանավորված/չպլանավորված (չարթերային) երթուղիներով տոմսերի օնլայն վաճառք | - | 18մլն ՀՀ դրամից ավելի | միջին ամսական շրջանառության գումարի 10 % |
| 2. Ճանապարհորդական ծառայություններ – Travel agencies– (ներգնա/արտագնա տուրիստական փաթեթների վաճառք) | - | 6մլն ՀՀ դրամից ավելի | միջին ամսական շրջանառության գումարի 10 % |
| 3. Շքեղության ապրանքների, այդ թվում՝ թանկարժեք զարդերի (թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր, ժամացույցներ), բացառիկ (exclusive) ապրանքների և այլ թանկարժեք պարագաների վաճառք | 300.000 ՀՀ դրամ | - | - |
| 4. Խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ հեռախոսային կամ օնլայն տարբերակով, երբ Առևտրի կետի հետ առերես շփում չի նախատեսվում | 50.000 ՀՀ դրամ | - | - |
| 5. Դրամական հանգանակություններ հավաքող բարեգործական կազմակերպություններ | 399.999 ՀՀ դրամ | - | - |
| 6. Սեփական կայքի համար հանգանակություններ (donation) | 50.000 ՀՀ դրամ | - | - |
| 7. Քրաուդֆանդինգ (Crowdfunding) | Մինչև 399.999 ՀՀ դրամ ներառյալ | - | - |
| 8. Անկախ ոլորտից | - | 330մլն ՀՀ դրամից ավելի | միջին ամսական շրջանառության գումարի 10 % |